Գործ ԵԴ թիվ 8243/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

09 մարտի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ խնդրելով անվավեր ճանաչել «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Կարեն Անտոնյանի 01.02.2023թ. որոշումը:

Միաժամանակ «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը միջնորդել է սույն գործը քննել դատական նիստում՝ նկատի ունենալով, որ հայցվորն իր խախտված իրավունքներն ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստում:

Հայցադիմումը 02.03.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 03.03.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/9» ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ համայնքի մշակույթի տան կառուցման մնացորդային շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա է բավարարման, և սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից պահանջել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. «Կանժիլստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարել.

ԵԴ թիվ 8243/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի հունիսի 29-ին, ժամը 12:45-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**